լիս պետք էր նրա ձեռքը ածուխի կտոր դնել, որովհետև ֆաշկէրը, *որոնք ար-թուն են, մանավանդ մթնում,* վախենում *են ածուխից:*

Միջոցներ էին ձեռք առնվում երեխային չար աչքից պաշտպանելու հա-մար: Այդ նպատակով նրա օրորոցից կամ զգեստից կախում էին աչիչ ռըլռիճֆ-ճէր, *բուշնից շինած հմայիլներ, մոլլայի* գրէր *և այլն:*

Իսկ եթե երեխան, այնուամենայնիվ, կօխվըմ *էր՝ նիհարում, հյուծվում, նույնպես դիմում էին* մօգական *միջոցների: Այսպես անց էին կացնում նրան՝ զանազան օղակների՝ նեղ անցքերի միջով՝*

գայլի ծնոտից կապած կաշվե օղակի միջով, ինչպես անում էին ամուլ կնոջ համար.

ձիու սանձի միջով.

շեմքին կանգնեցրած հոր ոտների միջով.

հերթիկով.

ուղտի կամ էշի տակով.

հացի մեջ կտրած կլոր ծակով—այդ հացը պիտի ծածուկ գողացված լիներ այն տանից, որտեղից եկել էր ծննդկանի մոտ ֆառասունճօտ *կինը և երեխայի կոխման պատճառ դարձել.*

կշեռքը կանգնեցնում էին գետնին, ամեն թաթի մեջ դնում էին ֆաֆօռ՝ *չորացած աղբ և կշեռքի երկու կախված թաթերի արանքով երեխային անց-կացնում*[75]*.*

անց էին կացնում տան շեմքին կանգնեցրած այն մարդու ոտների չէֆավ՝ ծագավ, *որ մարդուց երեխան ըստ ենթադրության պիտի կոխված լիներ: Եթե այդ մարդը չէր ուզենա գալ, գողանում էին նրա ոտաշորը կամ* շալվարը *և* չէֆավ *երեխային անցկացնում:*

Բոլոր այսպիսի դեպքերում գործողությունը կրկնվում էր երեք անգամ, այն էլ անպատճառ օղակի՝ ծակի արանքի, անցքի միևնույն մեկ կողմից:

Եթե միսը ներս բերելիս մոռացել էին երեխային սենյակից դուրս հանել, այդ կամ մի այլ մսից մի կտոր ձգում էին ջրի մեջ և երեխային նույն ջրով յոթ անգամ լողացնում: Լողացնում էին երեխային երեք անգամ ջուր ածելով սատկած կամ նոր ծնված լակոտի, կամ սատկած կատվի վրա—մեկ՝ չորեք-շաբթի, երկու՝ ուրբաթ կամ երկու՝ չորեքշաբթի և մեկ՝ ուրբաթ օրերը: Լողաց-նում էին անճաշակ՝ *հաղորդություն չստացած մեռած մարդու գերեզմանի վրա, նրա ոտների տեղում:* Քռասունճֆակօխ *երեխային լողացնում էին սև հավի նոր ածած ձվի կճեպով քառասուն անգամ լցված ամանի ջրի մեջ: Դա-տարկվող կճեպը պիտի երեխային էլ դատարկեր հիվանդությունից*[76]*:* Թըլիսմի ջամօվ՝ *թասով յոթն անգամ* եղլամիշ *էին անում թիկունքի երկու թիակների* արալըղավ՝ *միջով:*

Այսպիսով լվանում էին երեխայի վրայից հիվանդությունը:

Քառասունքակոխ երեխայի ֆռասունճը կտրում էին: *Տատմերը յոթ հավից մի-մի փետուր փետելով և յոթ գույն թել վերցնելով եփում էր կտուրը և հերթիկից կանչում՝.*

«Ըստրա քըռասունքը կտրե՞մ»:

---

75 *Բեխ:*

76 *Եթե երեխան անշնչացած էր ծնվում, սև հավի գլուխը կտուցով ներս էին խցկում հե-տույքի անցքով, հավը սատկում էր, երեխան շունչ առնում: Սև հավը կարծես իր վրա էր վերց-նում երեխայի մահը: Հավատում էին, որ սև հավի արյունն էլ* հմայող *զորություն ուներ:*